04.02.2024 ք. Երևան

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանին՝
ՀՀ քաղաքացի Հովհաննես Բագրատի Հովհաննեսյանից

ԻՐԱԶԵԿՈՒՄ
Հանրային հավաքի անցկացման մասին

Հարգելի պարոն Ավինյան

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ և հավաքի ղեկավար։

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկույթը.

1. Հավաքի վայրը՝ Երևան, Ազատության հրապարակ
2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2025թ. մարտի 04-ը, ժամը 00-24:00, շուրջօրյա
3.
4. Հավաքի նպատակը՝ Հայաստանի ներքաղաքական հարցերի քննարկում
5. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 1000, պահպանելով համավարակի հետ կապված բոլոր օրինական պահանջները։
6. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ դրոշներ, պաստառներ, վրաններ, պլաստիկե սեղաններ և աթոռներ, հովանոցներ, բարձրախոսներ, ձայնի ուժեղարարներ, էլեկտրասնուցման համար անհրաժեշտ մալուխ և այլ տեխնիկական սարքեր։
7. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 10 մարդ։
8. Հավաքի ընթացքում (ժամը 18:00-21:00) նախատեսվում է երթ՝ Ազատության հրապարակ–Սայաթ-Նովա պողոտա-Աբովյան փողոց- Հանրապետության հրապարակ- Ամիրյան փողոց-Մաշտոցի պողոտա-Ազատության հրապարակ երթուղով։
9. Հավաքի կազմակերպչի տվյալները՝
   Ազգանուն, անուն, հայրանուն՝ Հովհաննես Բագրատի Հովհաննեսյան

9. Հավաքի ղեկավարի տվյալները՝
   Ազգանուն, անուն, հայրանուն՝ Գասպարյան Վահե Քրիստափորի,

Վերոգրյալի հաշվառմամբ խնդրում եմ՝

1. Օրենքի սահմաններում ապահովել նշված հավաքին մասնակցողների իրավունքների լիարժեք իրացումը
2. Սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտերի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով։

Առդիր՝ հավաքի կազմակերպչի նույնականացման քարտի լուսապատճենը՝ 1 թերթ։

Հավաքի կազմակերպիչ Հովհաննես Հովհաննեսյան